ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/97

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն

Ս.Բալասանյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական թիվ 261.110.05665),

«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ

Կ.Դրամբյանի (լիազորագիր՝ տրված 10.12.2020թ.),

Տ. Ջիլավյանի (լիազորագիր՝ տրված 10.12.2020թ.),

քննելով «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 03.12.2020թ. ներկայացված (04.12.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/97 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 03.12.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ն Բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2020 թ. նոյեմբերի 24-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի Հրավերով պահանջվող ապրանքների համար Հրավերի «Չափաբաժնի անվանումը» սյունակներում թիվ 6, 7 և 8-րդ չափաբաժինների մասերով գրված է միևնույն՝ «Ախտահանիչ նյութ» անվանումը, թիվ 9-րդ չափաբաժնի մասով գրված է «Անտիսեպտիկ գել» անվանումը, իսկ թիվ 11-րդ չափաբաժնի մասով գրված է «Լուծույթ լվացող» անվանումը (կից փաստաթուղթ թիվ 2, արված նշումները):

Այդ անվանումները նույնությամբ գրված են նաև Հրավերի Հավելված 1-ի «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի «Գնման առարկայի անվանումը» սյունակների համապատասխան չափաբաժինների մասերով, իսկ նրանց ներկայացվող պահանջները ներառված են «Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը» սյունակներում, որտեղ այդ ապրանքների համար նշված մանրէասպան հատկությունների և կիրառման ոլորտների թվարկումները փաստում են, որ թիվ 6, 7 և 8-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները նախատեսված են բուժկանխարգելիչ կազմակերպություններում բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների, մեծ և փոքր մակերեսների ախտահանման, նախամանրէազերծումային մաքրման համար, իսկ թիվ 9 և 11-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները նախատեսված են ձեռքերի մաշկի հիգիենիկ և վիրաբուժական մաքրման ու լվացման համար (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1-3, արված նշումները):

Այդպիսի ապրանքները հանդիսանում են ախտահանիչ միջոցներ, որոնց կիրառումը ՀՀ բուժկանխարգելիչ կազմակերպություններում կատարվում է համաձայն ՀՀ Առողջապահության Նախարարի 2015թ. սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն Հրամանով հաստատված N 3.1.1-029-2015 սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմերի, որոնք ներկայացված են Հրամանին կից հավելվածում, և համաձայն որոնց՝ ախտահանիչ

միջոցները «...օգտագործվում են դրանց կից մեթոդական ուղեցույցի պահանջների համաձայն՝ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով»: (կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1-2, արված նշումները):

Դա փաստվում է նաև Պատվիրատուի Հրավերի Հավելված 1-ի թիվ 6, 7 և 8-րդ չափաբաժինների մասերի «Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը» սյունակներում առկա՝ «Պետք է ունենա ... նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ... » պահանջով, որը սակայն բացակայում է թիվ 9 և 11-րդ չափաբաժինների մասերով:

Հրավերի Հավելված 1-ի «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի «Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը» սյունակներում՝

ա) թիվ 6, 9 և 11-րդ չափաբաժինների մասերով առկա են պահանջներ, որոնք հակասում են գնումների մասին օրենսդրությամբ սահմանված գնման գործընթացի նպատակներին ու սկզբունքներին, ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և միջազգային ստանդարտների պահանջներին, դրանով իսկ արգելք են հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 7-րդ հոդված պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ Հրավերի թիվ 6, 9 և 11-րդ չափաբաժինների մասերով (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1-3, արված նշումները):

բ) թիվ 7 և 8-րդ չափաբաժինների մասերով առկա են բազմաթիվ պահանջներ, որոնց համադրումը (ինչպես նաև նախորդ տարիներին նմանատիպ ապրանքների մրցույթում հաղթող ճանաչված կոնկրետ անվանումներով հաբերի տվյալների և գների համադրումը) փաստում և հաստատում են, որ այդ չափաբաժիններով պահանջվող ապրանքները ըստ էության հանդիսանում են միևնույն՝ մեկ գնման առարկա, իսկ այդ մեկ գնման առարկայի բաժանումը առանձին չափաբաժինների հանգեցրել է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի մասի 1-ին կետով սահմանված պահանջի խախտմանը (կից փաստաթուղթ թիվ 3, էջ 2, արված նշումները):

ա) թիվ 7 և 8-րդ չափաբաժնի մասով՝

Համաձայն «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի 2019 թ. դեկտեմբերի 4-ի թիվ 1 որոշմամբ հաստատված հայտարարության (կից փաստաթուղթ թիվ 9), «Քիմիական հյութերի» ձեռքբերման նպատակով հրապարակվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20» ծածկագրով բաց

մրցույթի Հրավերը, որի «Չափաբաժնի անվանումը» սյունակներում թիվ 7 և 8-րդ չափաբաժինների մասերով գրված է միևնույն՝ «Ախտահանիչ նյութ» անվանումը (կից փաստաթուղթ թիվ 10, արված նշումները):

Այդ անվանումները նույնությամբ գրված են նաև Հրավերի Հավելված 1-ի «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի «Գնման առարկայի անվանումը» սյունակների թիվ 7 և 8-րդ չափաբաժինների մասերով, իսկ նրանց ներկայացվող պահանջները ներառված են «Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը» սյունակներում (կից փաստաթուղթ թիվ 11, արված նշումները), որոնք համարյա ամբողջությամբ նույնն են, ինչը որ առկա է մեր կողմից բողոքարկվող «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի Հրավերում առկա՝ թիվ 7 և 8-րդ չափաբաժինների մասերով տվյալները (կից փաստաթուղթ թիվ 3, էջ՝ 2, արված նշումները):

Համաձայն «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 03.02.2020 թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4-րդ արձանագրության թիվ 3-րդ կետի որոշման, Հրավերի թիվ 7 և 8-րդ չափաբաժինների մասերով հաղթող է ճանաչվել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն (կից փաստաթուղթ թիվ 12, արված նշումները), որը թիվ 7-րդ չափաբաժնի մասով առաջարկել է «Պրեսեպտ» անվանումով հաբերը, իսկ թիվ 8-րդ չափաբաժնի մասով առաջարկել է «Դեզիտաբս» անվանումով հաբերը (կից փաստաթուղթ թիվ 13):

Մեր կողմից կազմվել է տվյալների համեմատական աղյուսակ, որի համար հիմք են ընդունվել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» և «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20» մրցույթների Հրավերների Հավելված 1-ի «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի թիվ 7 և 8-րդ չափաբաժինների մասերով «Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը» սյունակներում առկա պահանջներից թվով 6-ը, որոնք հանդիսանում են ախտահանիչ միջոցների համարժեքության որոշման հիմնական չափորոշիչները՝ 1-ազդող նյութը, 2-ակտիվ նյութը և քանակը, 3-հաբերի լուծվելը, լուծույթի տեսքը, հոտը, 4-հակամանրէային ակտիվությունը, 5-թունաբանական և անվտանգության ցուցանիշները և 6-կիրառման ոլորտները և ձևերը (կից փաստաթուղթ թիվ 14, էջեր՝ 1-2, «Չափորոշիչներ» սյունակներ):

Այս համեմատական աղյուսակում արտատպման եղանակով ներառված են «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20» մրցույթի Հրավերի թիվ 7 և 8-րդ չափաբաժինների մասերով «Գնման

առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը» սյունակներում առկա պահանջներից նրանք, որոնք համապատասխանում են այդ հիմնական չափորոշիչներին (կից փաստաթուղթ թիվ 14, էջեր՝ 1-2, «7-րդ չ/բ» և «8-րդ չ/բ» սյունակներ), ինչպես նաև այդ հիմնական չափորոշիչներին համապատասխանող այն բոլոր տվյալները, որոնք առկա են ՀՀ ԱՆ կողմից հաստատված «Պրեսեպտ» (կից փաստաթուղթ թիվ 15, էջեր՝ 1-4, արված նշումները), և «Դեզիտաբս» (կից փաստաթուղթ թիվ 16, էջեր՝ 1-5, արված նշումները) անվանումներով ախտահանիչ միջոցների կիրառման հրահանգներում (կից փաստաթուղթ թիվ 14, էջեր՝ 1-2, «Պրեսեպտ հաբ, 5 գրամ» և «Դեզիտաբս հաբ, 3,4 գրամ» սյունակներ), որտեղ արտատպման եղանակով ներառված տվյալները աներկբա կերպով փաստում և հաստատում են, որ «Պրեսեպտ» և «Դեզիտաբս» հաբերի տեսքով ախտահանիչ միջոցները իրարից տարբերվում են միայն անվանումներով և հաբերի կշիռներով, իսկ ախտահանիչ միջոցների համարժեքության որոշման հիմնական չափորոշիչներով այդ 2 տարանուն ապրանքները ունեն համարյա միևնույնն տվյալները:

Այս համեմատական աղյուսակում առկա տվյալների համադրումները ապացուցում են, որ թիվ 7 և 8-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները ըստ էության հանդիսանում են միևնույն՝ մեկ գնման առարկա, իսկ այդ մեկ գնման առարկայի բաժանումը առանձին չափաբաժինների հանգեցրել է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջի խախտմանը:

Պատվիրատուն այդ փաստացի մեկ գնման առարկան 2 չափաբաժինների վերածելը հիմնավորում էր այդ ապրանքների իբրև թե տարբեր ոլորտներում և տարբեր նպատակով կիրառելու պատճառով, ինչը արտացոլել է նաև այդտեղ գրված կիրառումների պահանջներով (կից փաստաթուղթ թիվ 11, դեղին նշումները), որոնք սակայն ամբողջական չեն, թերի են, ընտրողաբար գրված են ամեն չափաբաժնին միայն մեկական և իրարից տարբերվողները, որպեսզի տպավորություն ստեղծվի, որ այդ ապրանքները տարբեր գնման առարկաներ են հանդիսանում, ինչը չի համապատասխանում իրականությանը (կից փաստաթուղթ թիվ 14, էջեր՝ 1-2) :

Համաձայն «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20» մրցույթի Հրավերի թիվ 7 և 8-րդ չափաբաժինների մասերով հաղթող ճանաչված «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի (կից փաստաթուղթ թիվ 17), թիվ 7-րդ չափաբաժնի «Պրեսեպտ» անվանումով հաբը Պատվիրատուի կողմից ձեռք է բերվել 1 հատը 105 դրամ արժեքով, իսկ թիվ 8-րդ չափաբաժնի «Դեզիտաբս» անվանումով հաբը Պատվիրատուի

կողմից ձեռք է բերվել 1 հատը 8,5 դրամ արժեքով՝ մոտ 12,35 անգամ ավելի էժան, քան նրան փաստացի համարժեք «Պրեսեպտ» անվանումովը:

«Պրեսեպտ» անվանումով 60 000 հատ հաբի համար Պատվիրատուն վճարել է 6 300 000 /վեց միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ, այն դեպքում, երբ այդ նույն 60 000 հատի համար կարող էր վճարել 510 000 /հինգ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ, ինչի արդյունքում կտնտեսվեր 5 790 000 /հինգ միլիոն յոթ հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ (կից փաստաթուղթ թիվ 17), ինչը նշանակում է, որ փաստացի մեկ գնման առարկա հանդիսացող ապրանքները տարբեր չափաբաժինների բաժանելով, Պատվիրատուն գնումների գործընթացը տնտեսող, արդյունավետ և օգտավետ չի իրականացրել՝ ապրանքը ձեռք է բերվել ոչ համարժեք հատուցմամբ, «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտումներ:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի Հրավերի թիվ 7 և 8-րդ չափաբաժինների մասերով «Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը» սյունակներում առկա պահանջների ու տվյալների (կից փաստաթուղթ թիվ 3, էջ՝ 2, արված նշումները) համարյա ամբողջությամբ արտատպված են «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20» ծածկագրով բաց մրցույթի Հրավերի թիվ 7 և 8-րդ չափաբաժինների մասերով «Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը» սյունակներում առկա պահանջներից ու տվյալներից (կից փաստաթուղթ թիվ 11, արված նշումները), արված լրացումներն ու մի քանի թվերի փոփոխությունները էական նշանակություն չունեն, իսկ թիվ 8-րդում ընդհանրապես բացակայում է նախկինում առկա «Տարբեր վարակների դեպքում ախտահանումը պահանջում է տարբեր ռեժիմներ» պահանջը, որպեսզի ավելի մեծ տպավորություն ստեղծվի, որ այդ ապրանքները տարբեր գնման առարկաներ են հանդիսանում, ինչը չի համապատասխանում իրականությանը (կից փաստաթուղթ թիվ 14, էջեր՝ 1-2)»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է ընդունել որոշում, որը կպարտավորեցնի «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգում փոփոխություն կատարելու համար՝ ընթացակարգի թիվ 6, 7, 8, 9 և 11-րդ չափաբաժինների մասերով՝ դրանք համապատասխանեցնելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով,

13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջներին:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.12.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել ներկայացված բողոքը:

Ընկերությունը 09.12.2020թ. գրությամբ, ի լրումն վերը շարադրված բողոքի, հայտնել է հետևյալը.

«Ի լրումն 03.12.2020թ. բողոքի տեղեկացնում եմ Ձեզ, որ ԳԲՔԱ-ՆԳ-202/97 բողոքում «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 11-րդ չափաբաժինների մասերով բերված փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները առավել մանրամասնորեն ուսումնասիրելու համար խնդրում ենք Ձեզ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության «...Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ...» սահմանումով, կատարել պարզաբանական հարցումներ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ին և ՀՀ Առողջապահության Նախարարությանը ներքոգրյալ հարցերի վերաբերյալ՝

ա) թիվ 6-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ չափաբաժինների մասերով՝ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ին խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն, թե «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 6-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար 2018-2020թթ. հայտարարված մրցույթներում տվյալ չափաբաժինների մասերով քանի մասնակիցներ են եղել, ինչպես նաև՝ հաղթող ճանաչված ապրանքները ինչպիսի անվանումներ են ունեցել:

Կից ներկայացնում ենք այդ մրցույթների մասին մեր տրամադրության տակ գտնող տվյալները և հաղթած ապրանքների՝ ՀՀ ԱՆ կողմից հաստատված հրահանգները՝

6-րդ չ/բ՝ 1 մասնակից, «Անիոզիմ ԴԴ-1» (ի լրումն՝ կից փ/թ թիվ 1, էջեր՝ 1-3);

7-րդ չ/բ՝ 2 մասնակից, «Պրեսեպտ», մյուս մասնակից՝ «Պրեսեպտ» (ի լրումն՝ կից փ/թ թիվ 2, էջեր՝ 1-2);

9-րդ չ/բ՝ 1 մասնակից, «Անիոսժել» (ի լրումն՝ կից փ/թ թիվ 3, էջեր՝ 1-2);

11-րդ չ/բ՝ 1 մասնակից, «Անիոսեյֆ Սավո Դու» (ի լրումն՝ կից փ/թ թիվ 4):

բ) թիվ 9-րդ և 11-րդ չափաբաժինների մասերով՝ Առողջապահության նախարարությանը

ՀՀ բուժհիմնարկներում վիրաբույժների, բուժանձնակազմի, հիվանդների ձեռքերի ու մաշկի լվացման և ախտահանման համար կիրառվող հականեխիչ ախտահանիչ միջոցները պետք է ունենան ՀՀ ԱՆ կողմից հաստատված հրահանգ, թե՝ ոչ:

գ) թիվ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասերով՝ ՀՀ Առողջապահության նախարարությանը

Համաձայն ՀՀ Առողջապահության Նախարարության կողմից տրված՝ 2016թ. սեպտեմբերի 8-ի թիվ ԱԿ/22.2/-16 գրության՝ ի պատասխան «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի 2016թ. օգոստոսի 17-ի թիվ 08-258 գրության (ի լրումն՝ կից փ/թ թիվ 5, էջեր՝ 1-3), ինչպես նաև 2016թ. օգոստոսի 8-ի թիվ ԱԿ-9003-16 և 2016թ. նոյեմբերի 7-ի թիվ ԱԲ/22.Ն/12127-16 գրությունների, որոնք տրվել են ի պատասխան «Գնումների Աջակցության Կետրոն» ՊՈԱԿ-ի և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ախտահանիչ միջոցների համարժեքության վերաբերյալ մասնագիտական փորձաքննություն իրականացնելու 2016թ. օգոստոսի 8-ի և 2016թ. հոկտեմբերի 14-ի թիվ գրությունների (ի լրումն՝ կից փ/թ թիվ 6, էջեր՝ 1-2), ախտահանիչ միջոցների համարժեքության համար՝ «…որպես կողմնորոշիչ չափանիշների, կարող են դիտարկվել հետևյալ չափանիշները՝

1. Բաղադրակազմ…
2. Ախտահանիչ միջոցների խտանյութերի և պատրաստի աշխատանքային լուծույթների պահպանման ժամկետները…
3. Թունաբանական և անվտանգության ցուցանիշներ…
4. Հակամանրէային ակտիվություն…
5. Կիռման ոլորտ…»:

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Առողջապահության կողմից հաստատված կիրառման մեթոդական հրահանգ ունեցող՝ հաբերի տեսքով դյուրալուծ քլոր պարունակող, թվով 5 ախտահանիչ միջոցների հրահանգներից արտատպված՝ վերոգրյալ չափանիշներին վերաբերվող տվյալները (կից փաստաթուղթ թիվ 7, էջեր՝ 1-3):

Խնդրում ենք Ձեզ՝ իրականացնել մասնագիտական փորձաքննություն՝ ներկայացված ախտահանիչ միջոցների համարժեքության վերաբերյալ, համաձայն այդ չափանիշների:

Ելնելով ԳԲՔԱ-ՆԳ-2020/97 բողոքի ի լրումն «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր փաստացի և իրավական հիմքերից, ապացույցներից, «Խաչպար» ՍՊԸ-ն վերաձևակերպում է բողոք բերող անձի պահանջը հետևյալ շարադրությամբ՝

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ -ի «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2020թ. նոյեմբերի 24-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ «Բժշկական նշանակության ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի Հրավերի ընթացակարգը թիվ 6, 7, 8, 9 և 11-րդ չափաբաժինների մասերով և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունել որոշում, որը կպարտավորեցնի «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու հետևյալ որոշումները՝

1 «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգը չկայացած հայտարարել՝ ընթացակարգի թիվ 6, 7, 8, 9 և 11-րդ չափաբաժինների մասերով

2. «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգում փոփոխություն կատարել՝ ընթացակարգի թիվ 6, 7, 8, 9 և 11-րդ չափաբաժինների մասերով, դրանք համապատասխանեցնելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 3-րդ մասով և 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջներին:

3 «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի թիվ 6, 7, 8, 9 և 11-րդ չափաբաժինների մասերով համապատասխան փոփոխությունները կատարելուց հետո դիմել «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի ղեկավարությանը՝ կատարված փոփոխություններով նոր ծածկագրով մրցույթ հայտարարելու գործընթաց նախաձեռնելու համար՝ այդ ապրանքների ձեռքբերման նպատակով»:

Ընկերությունը 21.12.2020թ. գրությամբ, ի լրումն վերը շարադրված բողոքի, հայտնել է հետևյալը.

« Ի լրումն 03.12.2020թ. բողոքի և ի պատասխան 2020թ. դեկտեմբերի 9-ին կայացած բողոքի քննության նիստում Ձեր կողմից բարձրացված հարցերի, Ձեզ ենք ներկայացնում «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ -ի կողմից 2020 թ. նոյեմբերի 24-ի թիվ 1 որոշմամբ հաստատված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի Հրավերի թիվ 6, 7, 8, 9 և 11-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները 2016-2020թթ. ձեռք բերելու համար

«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ -ի կողմից տարբեր ծածկագրերով հայտարարված Հրավերների մրցույթների Հայտարարությունների, Հրավերների, Հրավերներում առկա՝ համապատասխան ապրանքների տեխնիկական բնութագրերի, հաղթող մասնակիցների հետ պայմանագիրներ կնքելու որոշումների պաշտոնական փաստաթղթերի պատճենները՝

1) 2016թ. մայիսի 25-ի թիվ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով մրցույթի փաստաթղթերը (2-կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 1-5, արված նշումները),

2) 2017թ. նոյեմբերի 30-ի թիվ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/11» ծածկագրով մրցույթի փաստաթղթերը (2-կից փաստաթուղթ թիվ 2, էջեր՝ 1- 5, արված նշումները),

3) 2018թ. մարտի 20-ի թիվ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/27» ծածկագրով մրցույթի փաստաթղթերը (2-կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1-4, արված նշումները),:

4) 2019թ. փետրվարի 27-ի թիվ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/30» ծածկագրով մրցույթի փաստաթղթերը (2-կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1- 9, արված նշումները),

5) 2019թ. դեկտեմբերի 04-ի թիվ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20» ծածկագրով մրցույթի փաստաթղթերը (2-կից փաստաթուղթ թիվ 5, էջեր՝ 1- 8, արված նշումները) :

Ձեզ ենք ներկայացնում նաև այդ պաշտոնական փաստաթղթերում առկա տվյալներով մեր կողմից կազմված՝ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ -ի 2020թ. Նոյեմբերի 24-ի «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի Հրավերի՝ մեր կողմից բողոքարկվող, թիվ 6, 7, 8, 9 և 11-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների և այդ ապրանքներին համարժեք, 2016-2020թթ. մրցույթներում առկա ապրանքների տեխնիկական բնութագրերում ներառված՝ համապատասխան տվյալներից ու պահանջներից արտատպված, տեղեկությունների համեմատական աղյուսակները՝ մրցույթի թիվ 6-րդ (2-կից փաստաթուղթ թիվ 6, արված նշումները), թիվ 7-րդ և 8-րդ (2-կից փաստաթուղթ թիվ 7, էջեր՝ 1-2, արված նշումները), թիվ 9-րդ (2-կից փաստաթուղթ թիվ 8, արված նշումները) և թիվ 11-րդ (2-կից փաստաթուղթ թիվ 9, արված նշումները) չափաբաժինների մասերով:

Ներկայացված համեմատական աղյուսակներում առկա տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանք 2016-2020թթ. կամ ամբողջովին նույնն են, կամ էլ արված փոփոխությունների «շնորհիվ» մրցույթները դարձել են ոչ մրցակցային, ինչը աներկբա կերպով փաստում և հաստատում է «Խաչպար» ՍՊԸ-ի այն պնդումները, որ այդ չափաբաժիններով տարիներ շարունակ պահանջվել և հաղթող են ճանաչվել միևնույն բրենդային անվանումներով միևնույն ապրանքները, որոնք առաջարկվել են միևնույն (հիմնականում՝ միակ) մասնակիցների կողմից:

ԳԲՔԱ-ՆԳ-2020/97 բողոքի քննության 2020թ. դեկտեմբերի 9-ին կայացած նիստում Դուք հարց տվեցիք «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ -ի կողմից լիազորված անձանց այն մասին, թե ում կողմից են կազմվել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով մրցույթի Հրավերի՝ մեր կողմից բողոքարկվող, թիվ 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 11-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների տեխնիկական բնութագրերը: Ձեր հարցին ի պատասխան՝ նիստին մասնակցող, «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից լիազորված անձինք հայտարարեցին, թե դրանք կազմվել են իրենց պատասխանատու ստորաբաժանման, իսկ ավելի կոնկրետ՝ բժիշկ-համաճարակաբանի կողմից:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ այդ պատասխանը չի համապատասխանում իրականությանը, ինչն ապացուցելու համար Ձեզ ենք ներկայացնում այդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ՀՀ-ում գործող բազմաթիվ այլ Պատվիրատուների կողմից հայտարարված մրցույթներից արտատպված տեխնիկական բնութագրերը, որոնք փաստացի միևնույն տվյալներն ու ձևակերպումները ունեն, որոնք բոլորն էլ վերցված են միևնույն սկզբնաղբյուրից՝ տվյալ կոնկրետ բրենդային անվանումն ունեցող ապրանքն արտադրողի կողմից կազմված տեխնիկական բնութագրերից՝ անգամ միևնույն սխալներով:

Այդ ապրանքների կիրառման մեթոդական հրահանգների պատճենները՝ որոնք հաստատված են ՀՀ ԱՆ կողմից, նույնպես ներկայացնում ենք՝ համեմատելու և համոզվելու համար՝

ա) թիվ 6-րդ չափաբաժնի մասով՝

ՀՀ ԱՆ կողմից հաստատված «Անիոզիմ ԴԴ-1» բրենդային անվանումով ապրանքի հրահանգի պատճենը, «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» մրցույթի Հրավերի թիվ 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը, այլ Պատվիրատուների կողմից հայտարարված մրցույթների տեխնիկական բնութագրերը (2-կից փաստաթուղթ թիվ 10, էջեր՝ 1-10, արված նշումները);

բ) թիվ 7-րդ չափաբաժնի մասով՝

ՀՀ ԱՆ կողմից հաստատված «Պրեսեպտ» բրենդային անվանումով ապրանքի հրահանգի պատճենը, «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» մրցույթի Հրավերի թիվ 7-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը, այլ Պատվիրատուների կողմից հայտարարված մրցույթների տեխնիկական բնութագրերը (2-կից փաստաթուղթ թիվ 11, էջեր՝ 1-8, արված նշումները);

գ) թիվ 8-րդ չափաբաժնի մասով՝

ՀՀ ԱՆ կողմից հաստատված «Դեզիտաբս» և «Ժավել Աբսոլյուտ» բրենդային անվանումներով ապրանքների հրահանգների պատճենները, «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» մրցույթի Հրավերի թիվ 8-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը, այլ Պատվիրատուների կողմից հայտարարված մրցույթների տեխնիկական բնութագրերը (2-կից փաստաթուղթ թիվ 12, էջեր՝ 1-15, արված նշումները);

դ) թիվ 9-րդ չափաբաժնի մասով՝

ՀՀ ԱՆ կողմից հաստատված «Անիոսժել» բրենդային անվանումով ապրանքի հրահանգի պատճենը, «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» մրցույթի Հրավերի թիվ 9-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը, այլ Պատվիրատուների կողմից հայտարարված մրցույթների տեխնիկական բնութագրերը (2-կից փաստաթուղթ թիվ 13, էջեր՝ 1-9, արված նշումները);

ե) թիվ 11-րդ չափաբաժնի մասով՝

Ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի արտադրության՝ «Անիոսեյֆ Սավո Դու ՀՖ» բրենդային անվանումով ապրանքը (որի անվանումով և տվյալներով «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» մրցույթ է կայացել 2016թ. մասիսի 25-ին) չունի ՀՀ ԱՆ կողմից հաստատված կիրառման մեթոդական հրահանգ, որի փոխարեն ներկայացնում եմ Ինտերնետից վերցված պատճենը, «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» մրցույթի Հրավերի թիվ 11-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը, այլ Պատվիրատուների կողմից հայտարարված մրցույթների տեխնիկական բնութագրերը (2-կից փաստաթուղթ թիվ 14, էջեր՝ 1-6, արված նշումները):

զ) թիվ 7 և 8-րդ չափաբաժինների մասերով՝

Ի հերքումն «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից 11.12.2020թ. Ձեզ ներկայացված թիվ 08-477 գրության մեջ բերված հիմնավորումների, Ձեզ ենք ներկայացնում մեր կողմից կազմված համեմատական աղյուսակը, որտեղ արտատպման եղանակով ներառված են այն բոլոր տվյալները, որոնք համապատասխանում են «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ին և «Խաչպար» ՍՊԸ-ին ի պատասխան 2016թ. առաքված՝ ՀՀ ԱՆ գրություններում առկա՝ ախտահանիչ միջոցների համարժեքության որոշման 5 չափորոշիչների ցուցանիշներին, որոնք առկա են բողոքարկվող «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների տեխնիկական բնութագրերում, «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի նախորդ տարիների մրցույթներում այդ չափաբաժիններին համապատասխանող ապրանքների մրցույթներում հաղթող ճանաչված՝ բրենդային «Պրեսեպտ», «Դեզիտաբս» և «Ժավել Աբսոլյուտ» անվանումներով դյուրալուծ քլորի հաբերի հրահանգներում, ինչպես նաև նրանց համարժեք «Աբակտերիլ քլոր» և

«Դիմաքս քլոր» բրենդային անվանումներ ունեցող դյուրալուծ հաբերի հրահանգներում, որոնք բոլորն էլ ունեն ՀՀ ԱՆ կողմից հաստատված կիրառման մեթոդական հրահանգ (2-կից փաստաթուղթ թիվ 15, էջեր՝ 1-3, արված նշումները):

Ներկայացված աղյուսակում ընդգրված՝ պաշտոնական փաստաթղթերից արտատպված, ՀՀ ԱՆ կողմից ախտահանիչ միջոցների համարժեքության որոշման 5 չափորոշիչների ցուցանիշներին համապատասխանաբար վերաբերվող տվյալները փաստում և հաստատում են՝

1) Բաղադրակազմ՝

Այդ բոլոր ապրանքների ազդող նյութը միևնույնն դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղն է, այսինքն՝ դրանք բոլորը համարժեք ապրանքներ են;

2) Պահպանման ժամկետներ՝

Այդ բոլոր ապրանքների հաբերը և նրանցից ստացվող աշխատանքային լուծութները ունեն համարյա միևնույն պահպանման ժամկետները, այսինքն՝ դրանք բոլորը համարժեք ապրանքներ են,

3) Թունաբանական և անվտանգության ցուցանիշներ՝

Այդ բոլոր ապրանքների հաբերը և նրանց աշխատանքային լուծույթները ունեն միևնույն՝ քլորին բնորոշ հոտը, ունեն միևնույն թունաբանական և անվտանգության ցուցանիշները՝ չափավոր վտանգավոր միջոցների 3-րդ դաս և քիչ վտանգավոր միջոցների 4-րդ դաս , այսինքն՝ դրանք բոլորը համարժեք ապրանքներ են;

4) Հակամանրէային ակտիվություն՝

Այդ բոլոր ապրանքների հաբերից ստացվող աշխատանքային լուծույթները ունեն միևնույն հակամանրէային ակտիվությունը տուբերկուլյոզի, հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների, վիրուսների և սնկերի նկատմամբ, այսինքն՝ դրանք բոլորը համարժեք ապրանքներ են,

5) Կիրառման ոլորտը և նպատակները՝

Այդ բոլոր ապրանքների հաբերից ստացվող աշխատանքային լուծույթները կիրառվում են միևնույն ոլորտներում, միևնույն նպատակներով և կիրառման միևնույն ձևերով, այսինքն՝ դրանք բոլորը համարժեք ապրանքներ են;

ՀՀ ԱՆ կողմից հաստատված դյուրալուծ քլորի հաբերի կիրառման մեթոդական հրահանգ ունեցող այս բոլոր 5՝ տարբեր բրենդային անվանումներով, ապրանքները իրարից տարբերվում են միայն իրենց բրենդային անվանումներով, հաբերի կշիռներով և 1

հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակներով (2-կից փաստաթուղթ թիվ 16), որոնք սակայն չեն հանդիսանում ախտահանիչ միջոցների համարժեքության որոշման համար ՀՀ ԱՆ կողմից ընդունելի համարվող 5 չափորոշիչների ցուցանիշներ, և ոչ մի էական նշանակություն չունեն այդ ապրանքների համարժեքությունը որոշելիս, քանի որ ինչպես ներկայացված այս բոլոր 5 ապրանքները, այնպես էլ մնացած բոլոր՝ դյուրալուծ քլոր պարունակող հաբերի տեսքով արտադրվող՝ տարբեր բրենդային անվանումներ ունեցող, ապրանքները, չեն կիրառվում պատրաստի հաբերի տեսքով, ինչը նշանակում է, որ այդ բոլոր տվյալները համադրելի չեն իրար հետ, ուստի չեն կարող կիրառվել տվյալ ապրանքների համարժեքությունների որոշման համար:

Ինչպես մեր կողմից ներկայացված այս բոլոր 5 ապրանքները, այնպես էլ մնացած բոլոր տարբեր բրենդային անվանումներ ունեցող՝ դյուրալուծ քլոր պարունակող հաբերի տեսքով ապրանքները, կիրառվում են ոչ թե հաբերի ձևով, այլ այդ հաբերից ստացված աշխատանքային լուծույթների ձևով, իսկ այդ հաբերից յուրաքանչյուրի 1 հատը 10 լիտր ջրում լուծելիս ստացվում է փաստացի միևնույն՝ 0,015 տոկոսանոց ակտիվ քլոր պարունակող, կոնցենտրացիայի աշխատանքային լուծույթ:

Միայն «Պրեսեպտ»-ի 1 հաբից է (որը համաձայն իր հրահանգի պարունակում է միչև 1,76 գրամ ակտիվ քլոր) ստացվում մի փոքր ցածր կոնցենտրացիայի՝ 0,014 –տոկոսանոց ակտիվ քլոր պարունակող լուծույթ, սակայն այդ 0,001 հազարերրորդական տոկոսանոց տարբերությունը պրակտիկորեն այնքան չնչին է, որ այն կարելի է անտեսել, և բոլոր այդ հաբերի 1 հատից ստացված աշխատանքային լուծույթները համարել իրար հավասար, այսինքն՝ այդ բոլոր տվյալները համադրելի են իրար հետ, ուստի կարող են կիրառվել տվյալ ապրանքների համարժեքությունների որոշման համար, և քանի որ բոլորի այդ ապրանքների այս տվյալները փաստացի միևնույնն են, ուստի դրանք բոլորը իրար համարժեք են (2-կից փաստաթուղթ թիվ 16):

Վերոգրյալ տվյալները փաստում են, որ ինչպես մեր կողմից ներկայացված բրենդային անվանումներով ապրանքները, այնպես էլ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների հաբերը համարժեք և փաստացի նույնն են ինչպես ախտահանիչ միջոցների համարժեքության որոշման համար ՀՀ ԱՆ կողմից ընդունելի համարվող 5 չափորոշիչների ցուցանիշներով, այնպես էլ այդ հաբերի 1 հատը 10 լիտր ջրում լուծելիս ստացվող աշխատանքային լուծույթների կոնցենտրացիաներով (2-կից փաստաթուղթ թիվ 15, էջեր՝ 1-

3, արված նշումները), ինչը նշանակում է, որ դրանք բոլորը իրար համարժեք են, այսինքն հանդիսանում են գնման մեկ առարկա, որոնց առանձին չափաբաժինների բաժանելը արգելվում է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջով:

«Նորք-Մարաշ» ԲԿ>> ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների տեխնիկական բնութագրերը կազմելիս պատասխանատու ստորաբաժանման կողմից թույլ են տրվել նաև «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 4-րդ մասով սահմանված պահանջների խախտումներ, այդ չափաբաժիններով պահանջվող ապրանքներին վերաբերվող բազմաթիվ և նույնական հատկանիշների մի մասը ներառել են թիվ 7-ում, մնացածների մի մասն էլ ներառել են թիվ 8-ում (2-կից փաստաթուղթ թիվ 15, էջեր՝ 1-3, արված նշումները), դրանով խեղաթյուրելով իրականությունը և ցանկալով տպավորություն ստեղծել, թե դրանք իրենց հատկանիշներով իբրև թե էականորեն տարբերվում են միմյանցից, այսինքն՝ դրանք իբրև թե տարբեր գնման առարկաներ են հանդիսանում, որոնց պետք է ներառել տարբեր չափաբաժիններում:

«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 7-րդ չափաբաժնի մասով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագիրը կազմելիս պատասխանատու ստորաբաժանման կողմից այնտեղ ներառված են այնպիսի կոնկրետ հղումներ պարունակող պահանջներ, որոնց «շնորհիվ» տարիներ շարունակ նմանատիպ մրցույթներում «պատահական կերպով» հաղթող է ճանաչվում միշտ միևնույն ապրանքը՝ «Պրեսեպտ» բրենդային անվանումով (2-կից փաստաթուղթ թիվ 7, արված նշումները), որը հիմնականում լինում է միակ առաջարկված ապրանքը, և որի արժեքը «պատահական կերպով» մշտապես 6-10 և ավելի անգամներ թանկ է լինում համարժեք մյուս ապրանքներից, ինչի արդյունքնում Պատվիրատուն, իսկ հանձինս նրան՝ ՀՀ Պետբյուջեն, ունենում է տասնյակ միլիոնավոր դրամների գերածախս, ինչ հակասում է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջներին:

Ելնելով ԳԲՔԱ-ՆԳ-2020/97 բողոքին կից ներկայացված, ինչպես նաև այդ բողոքին որպես ի լրումներ՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր փաստացի, իրավական հիմքերից ու ապացույցներից, «Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 46-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ -ի «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց

մրցույթի գնահատող հանձնաժողովի 2020թ. նոյեմբերի 24-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ «Բժշկական նշանակության ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի Հրավերի ընթացակարգը թիվ 6, 7, 8, 9 և 11-րդ չափաբաժինների մասերով և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ընդունել որոշում, որը կպարտավորեցնի «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու հետևյալ որոշումները՝

1 «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգը չկայացած հայտարարել՝ ընթացակարգի թիվ 6, 7, 8, 9 և 11-րդ չափաբաժինների մասերով

2 «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգում փոփոխություն կատարել՝ ընթացակարգի թիվ 6, 7, 8, 9 և 11-րդ չափաբաժինների մասերով, դրանք համապատասխանեցնելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 3-րդ մասով և 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջներին:

3 «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի թիվ 6, 7, 8, 9 և 11-րդ չափաբաժինների մասերով համապատասխան փոփոխությունները կատարելուց հետո դիմել «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի ղեկավարությանը՝ կատարված փոփոխություններով նոր ծածկագրով մրցույթ հայտարարելու գործընթաց նախաձեռնելու համար՝ այդ ապրանքների ձեռքբերման նպատակով»:

2. <u>«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 08.12.2020թ. թիվ 08-463 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 03.12.2020թ. ներկայացված բողոքի, հայտնում ենք հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող

ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Հրավերում ներառված որևէ գնման առարկայի տեխնիկական բնութագրերում առկա չեն այնպիսի պահանջներ, որոնք հակասում եմ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Ընթացակարգի 6, 7, 8, 9 և 11-րդ չափաբաժիններում Պատվիրատուն նկարագրել է իր կարիքին համապատասխան գնման ենթակա ապրանքներ, որոնք նախատեսված են կոնկրետ նպատակի համար (ախտահանում, մանրէազեծում, անտիսեպտիկ մշակում, լվացում): Հնարավոր չէ նկարագրել քիմիական նյութը առանց նշելու դրանցում պարունակվող քիմիական անվանումները, դրանց դոզաները և միացությունները: Նշված փաստի առիթով կից ներկայացնում ենք ՀՀ առողջապահության նախարարության 09.09.16թ. թիվ ԱԿ/22.2/9887-16 գրությունը, որով հստակեցվել են ախտահանիչ նյութերի նկարագրության և համարժեքության գնահատման թվով 5 ցուցանիշները: Ախտահանիչ նյութերի ցուցանիշների ընտրությունը և դրանց համարժեքության գնահատմանը վերաբերվող պահանջները ընտրում է Պատվիրատուն, այլ ոչ թէ Մասնակիցը: Այդ փաստի առիթով ներկայացնում ենք ՀՀ առողջապահության նախարարության 2017-12-05 թիվ ԼԱ/15034-17 գրությունը, որով պարզաբանվել է ախտահանիչ նյութերի համարժեքության չափանիշների սահմանման իրավասությունը:

Ցանկացած հնարավոր մասնակից կարող է բարձրացնել նմանատիպ հարց, հայտարարել, որ իր կողմից ներկայացվող ապրանքի բնութագրերը չեն բավարարում հրավերի պահանջներին և հրավերի պահանջները դիտարկել որպես խտրական: Սակայն դա իրավացի պահանջ չի կարելի համարել, քանի որ նման դեպքում անիրական կդառնա հրավերում որևէ հստակ նկարագիր ներառելը և նույն ոլորտում կիրառվող աշխարհում գոյություն ունեցող բոլոր նյութերը պետք է դիտարկվեն որպես համարժեք փոխարինելի, առանց հաշվի առնելու դրանց կազմում ընկած քիմիական միացությունները, դրանց դոզաները, թունավորության աստիճանները և այլ պահանջները: Միայն այն տեղեկությունը, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվող ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով ներկայացված պահանջներին, դեռ բավարար չէ հրավերի պահանջները խտրական համարելու համար:

Հրավերի 9-րդ և 11-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերում ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգի առկայության պահանջ չներառելու վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Բողոքում մեջբերված սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը վերաբերում են բժշկական նշանակության արտադրատեսակներին, դրանց մշակմանը և մանրէազերծմանը: Տվյալ չափաբաժիներնով ներկայացված ապրանքների կիրառման նպատակը ապրանքներ ախտահանելը չէ, այլ ձեռքերի կամ մարմնի վիրաբուժական և (կամ) հիգիենիկ լվացումն է: Այստեղ չպետք է արտադրատեսակը խառնել մարդու հետ: Ձեռքերի կամ մարմնի հիգիենիկ լվացման նպատակող լվացող միջոցների կամ անտիսեպտիկ միջոցների կիրառման համար Հայաստանի Հանրապետությունում առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգի առկայությունը պարտադիր չէ, ուստի դրա պահանջը կհանգեցնի նաև խտրականության և մասնակցության սահմանափակման:

Ընթացակարգի 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով հայտնում ենք հետևյալը.

Նշված չափաբաժինների գնման առարկաների տեխնիկական բնութագրերը պարունակում են իրարից ակնհայտ տարբերվող ցուցանիշներ, որոնք նաև արտահայտված են ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգերում: Պատվիրատուն գնում է ոչ թէ հաբերից պատրաստված աշխատանքային լուծույթներ, այլ գործարանային արտադրության և գործարանային փաթեթավորմամբ

հաբեր, որոնք ունեն միմյանցից հստակ տարբերվող բնութագրեր, և միայն այն փաստը, որ այդ երկու ապրանքները կիրառվում են նույն ոլորտում, չի կարող հիմք հանդիսանալ դրանք նույն ապրանքը համարելու համար: Ուստի գտնում ենք, որ Ընթացակարգի շրջանակներում 7-րդ և 8-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները մեկ չափաբաժնում ներառելը կհակասեր Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

Բացի այդ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, որին վկայակոչել է նաև բողոքաբերը,

1. Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝

1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.

Նշված դրույթը հստակ սահմանում է, որ գնման առարկան առանձին չափաբաժինների բաժանելը արգելվում է մրցակցային ձևի կիրառումից խուսափելու նպատակով: Այսինքն, եթե պատվիրատուն կիրառում է գնման մրցակցային ձև, ապա անգամ միևնույն տեխնիկական բնութագրով ապրանքը առանձին չափաբաժնի առանձնացնելը արգելված չէ: Տվյալ դեպքում Պատվիրատուն կիրառել է օրենքով նախատեսված մրցակցային և նախընտրելի ձևը, այն է բաց մրցույթը: Ուստի, ինչպես էլ մեկնաբանվեն ապրանքների բնութագրերը, միևնույն է տվյալ մասով բողոքը հիմնավոր չէ:

Ամփոփելով վերոնշյալ տեղեկությունները՝ գտնում ենք, որ ընթացակարգի հրավերը լիովին համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին և բողոքը հիմնավոր չէ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.12.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/97 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2020/97 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ

փաստերը.

1.«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 11-րդ չափաբաժինների մասով սահմանվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Չ/Հ	Ապրանքի անվանում	Ապրանքի տեխնիկական բնութագիրը
6	Ախտահանիչ նյութ	Փաթեթավորումը. 1լիտրանոց, գործարանային արտադրության փակ տարայով: Բաղադրությունը- ՉԱՄ, Գուանիդինի ածանցյալներ (Գուանիդինի- ի ածանցյալներ՝ ոչ ավելի, քան 1%), ֆերմենտային կոմպլեքս՝ ոչ պակաս քան 3 էնզիմի պարունակութամբ (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), մակերևույթային ակտիվ նյութեր՝ ՄԱՆ-եր, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ և այլ հավելյալ նյութեր: Պետք է պարունակի նաև կոռոզիայի ինհիբիտորներ, որի առկայությունը պետք է հաստատվի օգտագործման հրահանգով: PH- 5,0-8,0: Պետք է լինի ոչ առավել թունավոր քան հետևյալը՝ ստամոքս ընկնելիս և մաշկի վրա քսվելիս պատկանում է 4-րդ դասի քիչ վնասակար նյութերին, որովայն ներթափանցելիս՝ 5-րդ դասի գործնականում անվտանգ նյութերին: 1լիտր խտանյութից պատրաստվի մինչև 0,5%-անոց, ոչ պակաս, քան 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ ազդեցությունը գրամդրական և գրամբացասական մանրէների նկատմամբ (ներառյալ՝ տուբերկուլոզի միկոբակտերիաները), հակավիրուսային ազդեցությունը (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային ազդեցությունը (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) մինչև 15 րոպեում: Կիրառման նպատակը. նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար, երեքը մեկում միաժամանկ: Պատվիրատուն կիրառում է լուծույթը ըստ մեթոդական հրահանգի՝ 0.5%-անոց, որը ապահովում է հակաբակտերիալ վարակազերծումը (ներառյալ տուբերկուլյոզը) 15 րոպեում: Պիտանելիության ժամկետները ոչ պակաս քան արտադրողի փակ տարայում՝ 3 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 5 օր: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:
7	Ախտահանիչ նյութ	Հաբի քաշը 5գ., որում ազդող նյութը՝ դիքլորիզոցիանաթթվի նատրումական աղը, կազմում է առաջարկվող հաբի ընդհանուր զանգվածի ոչ ավել քան 50%-ը: Որպես հավելող նյութեր պարունակում է նատրիումի հիդրոկարբոնատ և ադիպինաթթու, որոնք ապահովում են աշխատանքային լուծույթի ակտիվությունը առնվազն 5 օր: 1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը ոչ պակաս քան 1.7 գ: Հաբերը ինքնալուծվող են: Միջոցը օժտված է հակամանրէային (ներառյալ տուբերկուլյոզ և հատուկ վտանգավոր վարակներ), հակավիրուսային, հակասնկային ակտիվությամբ: 0,112 % անոց լուծույթ ստանալու համար օգտագործվող հաբերի քանակը 10լ ջրին՝ ոչ ավել քան 8 հատ, 0,168% անոց լուծույթ ստանալու համար՝ ոչ ավել քան 12 հատ, 0,28% անոց լուծույթ ստանալու համար՝ ոչ ավել քան 20 հատ: Պետք է լինի ոչ առավել թունավոր քան հետևյալը՝ ստամոքս ընկնելիս պատկանում է 3-րդ դասի չափավոր վնասակար նյութերին, մաշկի վրա քսվելիս՝ 4-րդ դասի քիչ վտանգավոր: Աշխատանքային լուծույթը միատարր է, չի պարունակում նստվածք, քլորին բնորոշ շատ թույլ հոտով է, աշխատանքային լուծույթը հիմնականում կիրառվում է վիրահատական տարածքներում մշակումների համար և չպետք է առաջացի տեսուղական և շնչառական օրգանների սուր գոգավածություն: Պետք է լինի գործարանային փակ տուփերով: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:
8	Ախտահանիչ նյութ	Ախտահանիչ միջոցը պարունակում է դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղ ազդող նյութ, ֆունկցիոնալ հավելումներ՝ ադիպինաթթու, նատրիումի կարբոնատ և բիկարբոնատ Հաբը կշռում է 2,5-3,7գ, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1,5գ ակտիվ քլոր: Հաբերն ինքնալուծվող են: Աշխատանքային լուծույթի պիտանելիության ժամկետը 7 օր մեթոդական ցուցումների համաձայն պահպանման դեպքում/: Ախտահանիչ միջոցը ցուցաբերում է հակամիկրոբային ազդեցության գրամդրական և գրամբացասական բակտերիաների /ներառյալ տուբերկուլյոզի, ներհիվանդանոցային վարակների, անաէրոբ և հատուկ վտանգավոր ինֆեկցիաների՝ սիբիրյան խոց, ժանտախտ, խոլերա, տուլարեմիա/, սնկերի /այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտներ/, վիրուսների /այդ թվումէ պոլիոմելիտ, ՄԻԱՎ, հեպատիտներ, թռչնի գրիպ, ատիպիկ թոքաբորբ, ադենովիրուս և այլն/: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:

9	Անտիսեպտիկ գել Անտիսեպտիկ գել	Սպիրտային հիմքով անտիսեպտիկ գել, պարունակությունը՝ էթիլային սպիրտ 70%, որը պարտաստի վիճակում ոչ պակաս քան 65%, գլիցերին և այլ օժանդակ նյութեր: Պետք է ունենա որակի հավաստագիր, փաթեթավորումը՝ 1-ից 5լ անոց տարաներով: 1-1,5 լիտրանոց տարայի դեպքում պետք է ունենա դոզավորող սեղմակ:Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 1 տարի:Պետք է ունենա որակի հավաստագիր:
11	Լուծույթ լվացող	Բաղադրությունը՝ - լվացող բաղադրիչներ ՝ լաուրամֆոկարբոքսիգլիցինատ, սոդիում լաուրիլսուլֆատ, լինոլեաինաթթվի դիէթանոլամիդ պահպանող բաղադրիչներ ՝ բենզիլ սպիրտ , նատրիումի բենզոատ խոնավեցնող բաղադրիչներ ՝ գլիցերին պաշտպանող բաղադրիչներ ՝ սուլֆոսուկցինատ և այլ հավելումներ: Չի պարունակում ալերգեն սուբստանցիաներ, տրիկլոզան: Օգտագործման համար տարիքային սահմանափակում չկա, ամենօրյա օգտագործման դեպքում չի գրգռում մաշկը: Օգտագործվում է ինչպես ձեռքերի վիրաբուժական և հիգիենիկ լվացման համար, այնպես էլ մարմնի լվացման համար: Օժտված է բակտերիոստատիկ և ֆունգոստատիկ ազդեցությամբ: Փաթեթավուրումը - 1 լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա: Տարան դոզավորող պոմպով է,պոմպի մեկ սեղմումը 2մլ է: Պիտանելիության ժամկետը՝ 3 տարի: Պետք է ունենա որակի հավաստագիր:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 03.12.2020թ. բողոքը և բողոքի լրացումը՝ կից փաստաթղթերով, «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի 08.12.2020թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) ***պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝*** համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) ***<u>պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.</u>***

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. ***<u>Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:</u>***

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին,

ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպես, «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/19» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 11-րդ չափաբաժինների մասով սահմանվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Չ/Հ	Ապրանքի անվանում	Ապրանքի տեխնիկական բնութագիրը
6	Ախտահանիչ նյութ	Փաթեթավորումը. 1լիտրանոց, գործարանային արտադրության փակ տարայով: Բաղադրությունը- ՉԱՄ, Գուանիդինի ածանցյալներ (Գուանիդինի- ի ածանցյալներ՝ ոչ ավելի, քան 1%), ֆերմենտային կոմպլեքս՝ ոչ պակաս քան 3 էնզիմի պարունակութամբ (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), մակերևույթային ակտիվ նյութեր՝ ՄԱՆ-եր, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ և այլ հավելյալ նյութեր: Պետք է պարունակի նաև կոռոզիայի ինհիբիտորներ, որի առկայությունը պետք է հաստատվի օգտագործման հրահանգով: PH- 5,0-8,0: Պետք է լինի ոչ առավել թունավոր քան հետևյալը՝ ստամոքս ընկնելիս և մաշկի վրա քսվելիս պատկանում է 4-րդ դասի քիչ վնասակար նյութերին, որովայն ներթափանցելիս՝ 5-րդ դասի գործնականում անվտանգ նյութերին: 1լիտր խտանյութից պատրաստվի մինչև 0,5%-անոց, ոչ պակաս, քան 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ ազդեցությունը գրամդրական և գրամբացասական մանրէների նկատմամբ (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային ազդեցությունը (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային ազդեցությունը (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) մինչև 15 րոպեում: Կիրառման նպատակը. նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար, երեքը մեկում միաժամանկ: Պատվիրատուն կիրառում է լուծույթը ըստ մեթոդական հրահանգի՝ 0.5%-անոց, որը ապահովում է հակաբակտերիալ վարակազերծումը (ներառյալ տուբերկուլյոզը) 15 րոպեում: Պիտանելիության ժամկետները ոչ պակաս քան արտադրողի փակ տարայում՝ 3 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 5 օր: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:
7	Ախտահանիչ նյութ	Հաբի քաշը 5գ., որում ազդող նյութը՝ դիքլորիզոցիանաթթվի նատրումական աղը, կազմում է առաջարկվող հաբի ընդհանուր զանգվածի ոչ ավել քան 50%-ը: Որպես հավելող նյութեր պարունակում է նատրիումի հիդրոկարբոնատ և ադիպինաթթու, որոնք ապահովում են աշխատանքային լուծույթի ակտիվությունը առնվազն 5 օր: 1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը ոչ պակաս քան 1.7 գ: Հաբերը ինքնալուծվող են: Միջոցը օժտված է հակամանրէային (ներառյալ տուբերկուլյոզ և հատուկ վտանգավոր վարակներ), հակավիրուսային, հակասնկային ակտիվությամբ: 0,112 % անոց լուծույթ ստանալու համար օգտագործվող հաբերի քանակը 10լ ջրին՝ ոչ ավել քան 8 հատ, 0,168% անոց լուծույթ ստանալու համար՝ ոչ ավել քան 12 հատ, 0,28% անոց լուծույթ ստանալու համար՝ ոչ ավել քան 20 հատ: Պետք է լինի ոչ առավել թունավոր քան հետևյալը՝ ստամոքս ընկնելիս պատկանում է 3-րդ դասի չափավոր վնասակար նյութերին, մաշկի վրա քսվելիս՝ 4-րդ դասի քիչ վտանգավոր: Աշխատանքային լուծույթը միատարր է, չի պարունակում նստվածք, քլորին բնորոշ շատ թույլ հոտով է, աշխատանքային լուծույթը հիմնականում կիրառվում է վիրահատական տարածքներում մշակումների համար և չպետք է առաջացի տեսուղական և շնչառական օրգանների սուր գոգռվածություն: Պետք է լինի գործարանային փակ տուփերով: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:
8	Ախտահանիչ նյութ	Ախտահանիչ միջոցը պարունակում է դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղ ազդող նյութ, ֆունկցիոնալ հավելումներ՝ ադիպինաթթու, նատրիումի կարբոնատ և բիկարբոնատ Հաբը կշռում է 2,5-3,7գ, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1,5գ ակտիվ քլոր: Հաբերն ինքնալուծվող են: Աշխատանքային լուծույթի պիտանելիության ժամկետը 7 օր մեթոդական ցուցումների համաձայն պահպանման դեպքում/: Ախտահանիչ միջոցը ցուցաբերում է հակամիկրոբային ազդեցության գրամդրական և գրամբացասական բակտերիաների /ներառյալ տուբերկուլյոզի, ներհիվանդանոցային վարակների, անաէրոբ և հատուկ

		վտանգավոր ինֆեկցիաների՝ սիբիրյան խոց, ժանտախտ, խոլերա, տուլարեմիա/, սնկերի /այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտներ/, վիրուսների /այդ թվումէ պոլիոմելիտ, ՄԻԱՎ, հեպատիտներ, թռչնի գրիպ, ատիպիկ թոքաբորբ, ադենովիրուս և այլն/: Պետք է ունենա որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները:
9	Անտիսեպտիկ գել Անտիսեպտիկ գել	Սպիրտային հիմքով անտիսեպտիկ գել, պարունակությունը՝ էթիլային սպիրտ 70%, որը պարտաստի վիճակում ոչ պակաս քան 65%, գլիցերին և այլ օժանդակ նյութեր: Պետք է ունենա որակի հավաստագիր, փաթեթավորումը՝ 1-ից 5լ անոց տարաներով: 1-1,5 լիտրանոց տարայի դեպքում պետք է ունենա դոզավորող սեղմակ:Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 1 տարի:Պետք է ունենա որակի հավաստագիր:
11	Լուծույթ լվացող	Բաղադրությունը՝ - լվացող բաղադրիչներ ՝ լաուրամֆոկարբոքսիգլիցինատ, սոդիում լաուրիլսուլֆատ, լինոլեաինաթթվի դիէթանոլամիդ պահպանող բաղադրիչներ ՝ բենզիլ սպիրտ , նատրիումի բենզոատ խոնավեցնող բաղադրիչներ ՝ գլիցերին պաշտպանող բաղադրիչներ ՝ սուլֆոսուկցինատ և այլ հավելումներ: Չի պարունակում ալերգեն սուբստանցիաներ, տրիկլոզան: Օգտագործման համար տարիքային սահմանափակում չկա, ամենօրյա օգտագործման դեպքում չի գրգռում մաշկը: Օգտագործվում է ինչպես ձեռքերի վիրաբուժական և հիգիենիկ լվացման համար, այնպես էլ մարմնի լվացման համար: Օժտված է բակտերիոստատիկ և ֆունգոստատիկ ազդեցությամբ: Փաթեթավուրումը - 1 լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա: Տարան դոզավորող պոմպով է,պոմպի մեկ սեղմումը 2մլ է: Պիտանելիության ժամկետը՝ 3 տարի: Պետք է ունենա որակի հավաստագիր:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերին կից Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Պատվիրատուն Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 11-րդ չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրերը սահմանելիս նախատեսել է իր կարիքին համապատասխան գնման առարկայի տեխնիկական պահանջներ, և վերջինիս գործողություններն ուղղված են եղել Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործմանը, և դրանց արդյունքում որևէ կերպ չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները՝ հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ

արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեխնիկական բնութագիրը պետք է լինի հնարավորինս հստակ՝ ներառելով գնման առարկայի բոլոր հատկանիշները և միակ պայմանն այն է, որ տեխնիկական բնութագիրը չպետք է պահանջ կամ հղում պարունակի որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց, իսկ հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Դրա հետ մեկտեղ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 13-րդ հոդվածների պահանջներին:

Ուսումնասիրելով Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը՝ գտնում եմ, որ այն կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան և չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված՝ տեխնիկական բնութագրի կազմմանը ներկայացվող պահանջներին:

Դրա հետ մեկտեղ տեխնիկական բնութագրերում ախտահանիչ միջոցները բնութագրող նյութերը, դրանց դոզաները և միացությունները նշելը չի կարող դիտարկվել որպես խտրական պահանջ, քանի որ գնման առարկայի հատկանիշները պետք է հնարավորինս ներառեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը, որը բխում է Պատվիրատուի գնման պահանջից:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում հայտնել, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն օժտված չէ այնպիսի լիազորությամբ, որը թույլ կտար վերջինիս տալ գնահատական արդյոք Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերում ներառված

գնման առարկան և դրա համար սահմանված տեխնիկական պահանջները համապատասխանու՞մ են Պատվիրատուի կարիքին, թե՞ ոչ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է Ընկերության՝ ախտահանիչ միջոցների համարժեքության վերաբերյալ մասնագիտական փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ միջնորդությանը, ապա հարկ եմ համարում արձանագրել, որ նշված միջնորդությունը մերժվել է, քանի որ պահանջված փորձաքննության արդյունքը չէր կարող որևէ կերպ ազդել բողոքի քննության ելքի վրա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 03.12.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**